

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ԱԶՔԻ ԼՈՒՅՍ ԶԱՆ, ԴԱՐԴ ՄԻ ԱՆԻՎ...»
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՈՆ ՀԱՎՈՐՅԱՆ

Բանաստեղծությունն առաջին անգամ (լուկ սկսվածքով) հիշատակվում է Ն. Տեր-Կարապետյանի «Ճեմարանական շարադրության» մեջ (գրվել է 1894 թ., լույս է տեսել 1897 թթ.), ի թիվս գրողի որդու՝ Վարդան Աբովյանի (1840—1896) մոտ պահվող այլևայլ արձակ ու չափածո գործերի ու գրությունների¹։ Բնագիրը հրատարակվել է 1939 թ., նախ «Գրական թերթում»², ապա Լենինականի «Բանվոր» լրագրում (արտատպություն նախորդից)³։

Խ. Աբովյանի թողոնների մեջ, որոնք 1938 թ. օգոստոսին գրողի թոռները հանձնել էին Հայաստանի դրական թանգարանին՝ հայտնաբերելով ու հրատարակելով հիշյալ բանաստեղծությունը, վաստակաշատ արժանագետ Ռ. Զարյանը վերջինիս կցել էր նաև մի փոքրիկ ծանոթագրություն՝ փորձ անելով կրոնահել երկի ստեղծման շարժառիթները։

Շատ չանցած՝ սույն փտանավորը տեղ է գտնում Խ. Աբովյանի «Ընտիր երկերի» երկրորդ հատորում, որի կազմողն ու ծանոթագրողը դարձյալ Ռ. Զարյանն էր (գիրքը արտադրության է հանձնվել 1938 թ. դեկտեմբերի 11-ին, ստորագրվել է տպագրության՝ 1940 թ. սեպտեմբերի 23-ին)⁴։ Ըստ որում՝ բանաստեղծության բնագիրն արտատպված է անփոփոխ, իսկ բացատրական-ծանոթագրությունը՝ փոքր-ինչ խմբագրված։ Ահա՛ բանասերի բացատրությունը. «Այս բանաստեղծությունն ուղղված է մի մարդու դեմ,—գրում է նա,—որի զբաղմունքը, ինչպես երևում է, վաճառականությունն է եղել։ Թե ո՞վ է այդ վաճառականը և ի՞նչ դիպվածով է նա Աբովյանի երգիծանքի առարկան դարձել, դժվար է ասել։ Կարելի է միայն որոշ ենթադրություններ անել։ Իր աշակերտներին գրած նամակներում Աբովյանը բացահայտ արհամարհանքով է խոսում թիֆլիսաբնակ վաճառականների Մանգինովների, Խերոդինովների, Թայիրովների մասին։ Թերևս և սրանցից մեկնումեկին է նկատի ունեցել Աբովյանը։ Այս ենթադրությունը առավել հավանական է դառնում նրանով, որ բանաստեղծության մեջ տրված է ինչ-որ Գաբրիելի անուն, որը, սակայն, հետագայում հեղինակը ջնջել և գրել է՝ «Աչքի լույս ջան», հարկավ հեզնանքով։ Թայիրով եղբայրներից մեկի անունը եղել է Գաբրիել։ Հավանաբար,

1 Ն. Տեր-Կարապետյան, Խաչատուր Աբովյան, Տփղիս, 1897, էջ 135—136 (նախապես՝ «Լուսման», 1897, Բ գիրք, օգոստոս, էջ 163—164)։ «Տետր 4. Ղարիպ (ոտան.)», Հունայնություն աշխարհի, այգին Ղորղանովի, էջն ու բլբուլը (ոտան.), Աչքի լույս ջան, դարձ մի ավել (ոտան.), (քաղվածք՝ «Խաչատուր Աբովյանի աշխատությունները և մի քանի ուրիշ թղթեր»՝ պահված յուր հիշատակարաններում» հատվածից, ընդգծումն իմն է—Պ. Հ.)։

2 «Գրական թերթ», 31. I. 1939, էջ 4 («Խաչատուր Աբովյանի նորահայտ բանաստեղծություններից»)։

3 «Բանվոր», 1939, № 34, էջ 4։

4 Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. II, Երևան, MCMXL, էջ 165—166։

Աբովյանի երգիծանքի հերոսը եղել է հենց այդ Գաբրիել Թայիրովը», — և այլն⁵։

Աբովյանագիտության այն տարիների մակարդակը թույլ չի տվել գիտնականին վերջնական, սպառիչ խոսք ասելու, և նա բավարարվել է ենթադրությամբ։ Գրողի հսկայածավալ անտիպ ժառանգությունը նոր-նոր էր միայն դրվում գիտական շրջանառության մեջ, և շատ խնդիրներ, ինչպես և սույն բանաստեղծության հերոսի իսկական նախատիպն ու ստեղծման պատմությունը դեռ սպասում էին իրենց հայտնաբերողին, իրենց հիմնավոր լուսաբանմանը։ Չենք ասում արդեն, որ վաճառական Թայիրովները ի. Աբովյանի այս բանաստեղծության հետ ո՛չ մի առնչություն չունեն և նրանց մասին ի. Աբովյանի նամակներում ընդհանրապես ոչինչ չկա ասված։

Բանաստեղծությունը վերջին անգամ հրատարակվել է 1948 թ., գրողի երկերի ակադեմիական հրատարակության առաջին հատորի մեջ, ուր հավաքված է նրա չափածո ողջ ժառանգությունը։ Բնագիրը նորից է պատրաստված, նշված են նաև բնագրային տարբերությունները⁶։ Ինչ վերաբերում է մեկնություններ, ապա դա նոր ոչինչ չի ավելացնում Ռ. Զարյանի նախկին ենթադրություններին։ «Երգիծական այս բանաստեղծությունը, — կարդում ենք հատորի ծանոթագրություններում, — հանված է № 60 տետրակից. աշխարհաբար, անթվակիր, գրված է Թիֆլիսում. ուղղված մի վաճառականի, որի անունը Գաբրիել է, որովհետև սկզբում «աչքի լույս ջան» տողերի տեղը գրված է եղել «Գաբրիել ջան» և ապա ջնջված։ Գաբրիելը հավանաբար Գաբրիել Թայիրովն է, որը հայտնի հարուստ էր, և իրեն համարել է գրականության հովանավորող։ Աբովյանն առհասարակ վատ կարծիք է ունեցել Թիֆլիսի հայ հարուստների մասին, ծաղրել է նրանց տգիտությունը, ագահությունը և այլն։ Տպագրվել է 1939 թ. «Գրական թերթ» № 5-ում»⁷։

Այս վերջին տողերի հրապարակման օրերից անցել է ավելի քան երեսուն տարի։ Բանաստեղծության հեղինակային ինքնագրի (սևագիր) և նախորդ տպագրությունների համեմատությունն այժմ արդեն հնարավորություն է տալիս ո՛չ միայն վերջնականապես ճշտել բնագիրը, սպառիչ հաշվառման ենթարկել բնագրային տարբերությունները, կանոնավորել կետադրությունը, այլև, որ ամենակարևորն է, նոր հետախուզումների լույսի տակ վերականգնել սույն էրկի ստեղծման պատմությունը՝ անսխալ մատնացույց անելով և այն անցքն ու անձնավորությունը, որոնք ի. Աբովյանի սպանիչ ծաղրի առարկան են։

Բայց մինչ այդ մեջ բերենք բանաստեղծության բնագիրը և բնագրային տարբերություններն ամբողջությամբ, որովհետև ստորև հաճախ պետք է վերադառնանք դրանց։

Աչքի լույս ջան, դարդ մի՛ անիլ,
 Խտչ կճարես, փառք աստուծո.
 Ի՞նչդ ա պակաս, աստուծո օրը
 Ռումբին լիքը տանդ ա ըլում։
 Խանի խարաբ, ի՞նչ ես ուռչում.

⁵ Նույն տեղում, էջ 393։

⁶ Ի. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1948, էջ 176—177. Նախորդ հրատարակության համեմատությամբ ճշտված է 12-րդ տողը («Ընտիր երկերում»՝ «Ուղած գրքերդ...», այնինչ բնագրում՝ «Տպած գրքերդ...» է)։

⁷ Նույն տեղում, էջ 362։

- Լեյպցիգ, Լոնդոն ման ես էկել,
 Ալվան բաներ շատը տեսել:
 Կուպեցություն չէիր ուզում,
 Խաչ ու շնի հետը ընկնում:
- 10 էս օր, էքուց փոշտը կգա,
 Մուրազդ կանիս, տո՛, քեֆ արտո՛ւ:
 Տպած գրքերդ, դասթա-դասթա,
 Ցեց, մկներին դառել են փայ:
 Մկներն են քո անունդ օրհնում,
 Ում փող տվիր՝ վրեդ ծիծաղում:
 Աչքի լույս ջան, շատ մի՛ ուռչիլ,
 Իմաստուն ես, շատ մի՛ փքվիլ:
 Շատ էլ որ դու հենց հաստանաս,
 Փորիդ, քիսիդ դարար կտաս:
- 20 Դու որ չըլիս, էլ ի՞նչ կանենք,
 Քեզ շունենանք, էլ ո՞ւմ սիրենք:
 Մեր մեջլսի վարդը դո՛ւ ես,
 Մեր քաղաքի փառքը դո՛ւ ես:
 Ասենք՝ գրքի հոտ ես առել,
 Փիլիսոփա, վարպետ դառել,
 Չէ՛, էլի մեր քաղքի ճուտն ես,
 Մենք լավ գիտենք՝ ի՞նչ պտուղ ես:
 Կարդացողից դու հեռու կա՛ց,
 Քոնն ա գազը, դուքանդ բա՛ց:
- 30 Կապեկները դու կուլ տալով՝
 Մարդ ես դառել տանով, տեղով:
 Տո՛ էն թողի կեղտն ու հոտը
 Դեռ կպած են շլնքիդ մոտը:
 Մեղ ընչի՞ ես բեղնամ անում,
 Ու քեզ ու քեզ թանկ-թանկ ծախում:
 Մեկ բոյ ունիս՝ գազ ու կես ա,
 Գլուխդ հետը լիտր ու կես ա:
 Սիրուն երեսդ՝ ճարխալի նման,
 Կարմրել ա խիստ արմաղան:
- 40 Կախեթու կուպրն, ումբին թողած,
 Հազար փեշեն, կուլեն կորած՝
 Քու ի՞նչ բանն ա խելքիդ զոռ տաս,
 Աչքերդ չոես, ուռած ման գաս:
 Աչքի լույս ջան, լավ չե՛ս անում,
 Կարդացողից չե՛ս հեռանում:

Բնագրային սադրերություններ

(Նշվում են տողահամարներով, ջնջված բառերը առնված են ուղիղ փակագծերի մեջ):

- 1 [Գաբրիել] ջան, [նազ] մի անիլ,
 2 Խաչ[դ] կճարես, փառք աստուծո:

- 4 [Հազար գիրք ա տանդ տպվում.]
 7 [Սիրուն աղակերբ շատ ճիտ արել.]
 8 Կուպեցություն[ն] չէիր ուզում.
 13 Մկներին [են, ա՛խ, ար]ել փայ.
 16 [Գաբրիել] ջան, շատ մի ուռչիւ,
 32 Տո էն թողի կեղտն ու [«թերի գրված և ջնջված բառ՝ «իս<ն>»] ձուռը
 33 Դեռ կպած են [աչքիդ] մոտը.
 38 Երեսդ [թունդրի խփի] նման,
 40 Կախեթու [տ<իկն>] կուպրն, ումբին թողա՛յ;
 45 [Գաբրիել] ջան, լավ շես անում⁸,

Լուռ հանդիմանության և կշտամբանքի խոսքեր չէ, որ հնչում են այս բանաստեղծության մեջ, այլ շառաշուն ապտակ՝ հայ տնաբույս գիտնականների և նորելուկ վաճառականների երեսին, որոնց դաշնակցության ծնունդը, ինչպես ստորև կտեսնենք, ոչ թե բարեբարություն էր, այլ շարիք՝ ազգային լուսավորության և հառաջադիմության համար:

«Վերք Հայաստանի» վեպում, ցանկանալով երախտագիտության ինքնաբուխ խոսք ուղղել իր մասնավոր աշակերտների ծնողներին՝ Խ. Աբովյանը սկզբնապես գրել էր. «Աստված էլի կյանք տա՝ Թիֆլիզի վաճառականներին, Աստված նրանց պահի՛ր, պայծառացնի՛ր, Ազգի համար հաստատ մնան, որ որդիքը մեկ տեղ տալիս՝ աղաշում են, մունաթ են անում, թե «Հայի, Հայի լեզուն, Հայի դիրք, արևի՛դ մեռնիմ, երեխես թող Հայի լեզուն լավ սովորի ու ինձ նրման անլեզու շմնա, մեկ ջուղաբ չկարենա տալ: Մենք հո մարգի հեսաբում չենք: Կմեծանա, որ ողորմի շտա, ուշունց խոմ չի՛ տալ: Մյուս լեզվորները խոմ կսո՛վորի, կսո՛վորի: Դրա դարդը չո՛ւնիմ: Ժամ գնալիս՝ մնում եմ բերանս բաց՝ ռավարի պես կաղնած: Ո՛չ ասածն եմ հասկանում, ո՛չ կարդացածը: Մենք խոմ Հայ չենք, վա՛յ մեր հոգուն» և այլն: «Ասողը կասի իր մտքումն, թե սպիտակ, շալ-շալ մանեթների հունարն ա, որ լեզուս էս հանգին բան ա ընկել: Փողի համն ուրիշ ա, օձը բնիցը կհանի: Թո՛ղ ասում են, ասեն: Մանեթ որ տնենամ, ընչի՞ էսպես սոված կըլիմ, ու աչքիս լիսը կթռցնեմ»⁹:

Վեպի վերջնական վերամշակման ժամանակ, սակայն, զգալով, որ ոգևորության պահին ասել է բաներ, որ ակնհայտ չափազանցություններ էին ու կարող էին այլ կերպ մեկնաբանվել, վերևի ընդարձակ խոսքերը քամել է ու թողել այսքանը. «Աստված կյանք տա էն ծնողացը, որի որդիքն ինձ մոտ են: Նրանց առաջին խնդիրն միշտ էն ա էլի, որ նրանց որդիքը հայերեն լավ գիտենան: Գերեզմանն էլ որ մտնիմ, նրանց էս սուրբ խոսքը մտքիցս չի՛ դնալ»¹⁰: Վաճառական դասի խնկարկման և ո՛չ մի հետք...

Ինչ խոսք, Խ. Աբովյանն իրավացի էր, երբ զգացված՝ օրհնության խոսք էր ուղղում Թիֆլիսահայերից ոմանց, որոնց բարոյական աջակցությունը՝ կյանքում իր մանկավարժական սկզբունքները արմատավորելու և հանուն ազգային առաջադիմության մղած անզիջում պայքարում հզոր նեցուկ էր նրա համար, մինչդեռ վաճառականության համակրանքը հետադեմների կողմն էր. նրանք շահեցնում էին այս վերջիններին և եթե ո՛չ ուղղակի, ապա անուղղակի

⁸ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Խ. Աբովյանի թողոններ, № 60, էջ 29—30.

⁹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1948, էջ 239.

¹⁰ Նույն տեղում, էջ 65.

ձևով վնասում ևս. Արուստին, երևույթ, որ չէր կարող աննկատ մնալ նրա ուշադրությունից և նյութ չծառայել դառն խորհրդածությունների համար, ինչպիսին «Աշխի լույս ջան, դառն մի անիլ...» բանաստեղծությունն է, որի շարժառիթն այն տարիներին Թիֆլիսում հայտնի դեպքերն ու անձնավորություններն էին:

Ռուսական տիրապետության առաջին տասնամյակներից տեղական վաճառականության կենցաղում մի հոռի սովորույթ էր արմատավորվել: Նրանցից առավել աչքի ընկնողներն ինչ-ինչ մուլթ կամ դատապարտելի ճանապարհներով հարստություն դիզելուց հետո՝ հետամուտ էին խաչ ու մեղալով իրենց ռուբլիները, մանավանդ որ դա ազնիվ երեւալու և վստահություն ձեռք բերելու անզուգական միջոց էր: Բայց ռուս պաշտոնեությունը հեշտությամբ չէր բաշխում շքանշանները. պարզատրվողների համար պետք է միջնորդին աշխարհիկ և հոգեւոր բարձր իշխանությունները՝ հիմք ունենալով տվյալ անձնավորության կատարած որեւէ հանրագույն գործը կամ բարերարությունը: Օրինակ՝ 1838 թ. կառավարչապետ Գ. Ռոզենի միջնորդությամբ Աննայի ժապավենով ոսկե մեդալներով պարգևատրվում են Ստեփան Ծգորի Խատիսյանը, Հովհաննես Զաքարի Շադինյանը և ուրիշ երկու վաճառականներ, որոնք Տրապիզոնի վրայով ողջ Առաջավոր Ասիան հեղեղող եվրոպական ապրանքների փոխարեն, գերադասում էին Անդրկովկաս ներմուծել ռուսական ձեռնարկությունների արտադրանքները¹¹: Հաջորդ տարվա ապրիլին Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի միջնորդությամբ ոսկե մեդալ է տրվում Մեծ Ղարաքիլիսայի բրնակիչ Սարգիս Տեր-Սահակյանին, որը բազում անգամներ նվիրաբերություններ էր արել էջմիածնի վանքին, իր միջոցներով փոստային ձիեր էր պահում Ղշլաղ ու Համամլու փոստակայաններում, նվիրված էր Ռուսաստանին¹² և այլն:

Ռուսական մեդալներով պճնազարդվելու հմայքը հանգիստ չէր տալիս մասնավորապես Թիֆլիսցի վաճառական Գաբրիել Աբելի Շադինյանին, որը, չնայած անհագ ցանկությունը՝ մինչ այդ առհասարակ որեւէ բարի գործով չէր փայլել: Եվ այժմ, երբ դրա փափագը կար, նորից այնպիսի բան է անում, որ կես ճանապարհին շահվում է մեծապես: Նա իր միջոցներով տպագրում է հայոց լեզվի քերականության դասագիրք, որպիսիք սակավագյուտ լինելու պատճառով՝ ձեռքի վրա ծախվում էին 6—10 ռուբլով, և երկու տարբեր անգամներ (վերջինը՝ 1840 թ. հունիսին) 300-ական օրինակ նվիրում է Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը¹³: Դա այլ բան չէր, քան Հակոբ և Դավիթ Արղանյանցիների բանաքաղությունը¹⁴, մեթոդապես անկատար մի ձեռնարկ: Թերթները այն:

Տիտղոսաթերթը հետևյալն է.

«Քերականութիւն Հայ: /Համառոտ/: Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի: Գաբրիելի Աբելեան Շադինեանց: /Տիֆլիս/: 1840: /Ի տպարանի հեղինակաց Քերականութեանս Յ. և Դ. Արզանեանց»/¹⁵:

¹¹ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 4481, «Закавказский вестник», 1838, № 20 (28.V), էջ 32:

¹² Նույն տեղում, գ. 5170:

¹³ Նույն տեղում, ֆ. 424, գ. 40, թ. 16 և ֆ. 2, ց. 2, գ. 372:

¹⁴ Հիշյալ գրքի օրինակներն այժմ պահվում են Մատենադարանում և ՎՍՍՀ պետական գրադարանում (տե՛ս Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 259, № 1060):

¹⁵ Թերթ գծիկով (/)անշատված բառերն ու արտահայտությունները առանձին տողեր են:

Երկրորդ էջում տեղավորված է հոգևոր գրաքննության կողմից տվյալ ձեռնարկը տպագրության թույլ տալու մասին որոշումը (նուսերեն և հայերեն միաժամանակ)։

«С разрешения высокостепенного Армянского патриарха *Иоаннеса*. /Տպագրեցաւ/ հրամանաւ բարձրաստիճան կաթողիկոսի Հայոց /տեառն Յովհաննու Կարբեցւոյ/»։

Գիրքը բացվում է հեղինակների ուսերեն առաջաբանով (անխորագիր, էջ 3—4), ուր հպանցիկ և ընդհանուր ձևով մատնանշվում են դասագրքի աղբյուրները՝ Վենետիկի Մխիթարյանների հրատարակած քերականական աշխատությունները, և վերստին հիշվում ու ներբողվում է հրատարակիչ բարերարը՝ փողատեր Գ. Շադինյանը՝ պսակված «հայրենասերի» տիտղոսով, այն էլ՝ մեծատառով. «Издание этой Грамматки принял на себя почтенный Патриот *Гавриил Авелович Шадинов* и шесть сот экз. принёс в дар Дирекции Закавказских училищ для безденежной раздаче бедным ученикам уездных училищ...» («Այս քերականության հրատարակության <ծախքն> իր վրա առավ հարգարժան Հայրենասեր Գաբրիել Աբելի Շադինյանը և վեց հարյուր օրինակ նվիրեց Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը՝ գավառական դպրոցների աղքատ աշակերտներին ձրի բաժանելու համար»)¹⁶։

Բուն քերականությունը զբաղեցնում է գրքի 5—275 էջերը, իսկ վերջին՝ 276-րդ էջի վրա տպագրված է Արզանյան եղբայրների, այս անգամ արդեն հայերեն, ծանուցումը իրենց բարերարի՝ Գաբրիել Աբելի Շադինյանի «Մեծագործության» թմբկահարությամբ և հորդորական խոսքով առ հայ հարուստներ, որպեսզի վերջիններս նրա օրինակին հետևեն և ազգօգուտ ձեռնարկներ անեն։ Մեջ բերենք ստրկահաճության այս գլուխգործոցը ևս.

ԱՂԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցաւելումն դրոց հայրենի բարբառոյ է անհրաժեշտ իմն պարտաւորութիւն որոց միանգամ նախանձաւորքն են պայծառութեան և լուսաւորութեան ազգի և հայրենեաց։ Ի շինութենէ անտի դպրոցաց ի Տփլիս՝ սակաւք միայն ի մերազնեայց յօժարամիտ բերան ի տպագրութիւն մատենից հարկաւորաց առ ի կրթութիւն հայազգի մերս գրականութեան. և այնք ևս յաւէտ վաճառաշահութեան, քան ձրիաբար ըաշխելոյ սակա ձեռնամուխ եղեն յայն գործ շահաբերութէ և այս այսպէս՝ բայց անդէն ի տպագրութեան առաջիկայ համառօտ Հայ Քերականութեանս ոմն յերեւելեաց Տփլիսայ՝ ազնուամիտ պարոն Գաբրիէլ Արէլեան Շադինեանց. այն՝ որում դէպ եղև երբեմն ի զննին ելանել վանացն սրբոյն Ղազարու, որ ի Վենետիկ՝ ինքնայօժար կամօք յանձն էառ զծախս տպագրութեանս սոյն Քերականութեան, զոր և ընծայեաց արքունի դպրոցացն Վրաստանի վասն ձրիաբար բաժանելոյ տնանկ համբակաց՝ պարապելոց յուսումն մերս բարբառոյ։ Զայս գործ գովանի և բազմարդիւն յառաջ բերաք աստանոր ո՛չ իբր քարոզեսցի սովիմք ազգասիրութիւն բարեպաշտօն առնս այսորիկ, այլ զի արծարծեսցի նոյն կայծ ուսումնասիրութեան և ի միտս միւս

16 «Քերականութիւն հայ», էջ 3։ Գրքում երկու տեղ (էջ 7 և 214—15) Արդանյանցները նշում են, որ ձեռնարկը կազմել են Մ. Զամչյանի և Գ. Ավետիքյանի աշխատութիւնների հետեւությամբ, իրականում տառացի արտագրելով, երբեմն՝ համառոտելով կամ էլ ի մի ձուլելով զուլգ աղբյուրներում ասվածը։

մերաղնէից՝ որոց ի սոյն օրինակ բարեգործութիւնս՝ լինել քաջայօժար ո՛չ կասկածիմք:

3. և Գ. Արգանեանք

Գ. Շաղինյանի և Արդանյանց եղբայրների միջև վաղուց էր մտերմություն հաստատվել: Վերջիններս նրան պատկանող տանն էին հիմնավորվել, իրենց մասնավոր դպրոցն ու տպարանը բացել¹⁷ և փոխադարձաբար, ուսումնական կամ առևտրական գործառնություններում, օգտաշատ խորհուրդներ էին տալիս միմյանց:

Թվում է, թե հանուն մեղալի քերականության գիրք տպագրելու և վերատեսչությանը նվիրելու միտքը Արդանյանցներն էին հուշել Գ. Շաղինյանին, մասնավորապես, ինչպես վկայում են վավերագրերը և հենց գրքի վրա եղած նըշումը, այդ ձեռնարկը արժանացել էր կաթողիկոսի և վերատեսչության հավանությանը¹⁸, Բայց այս դեպքում Գ. Շաղինյանը գործում էր իբրև խորամանկ վաճառական, որն առանց շահի մեկ կոպեկ էլ քամուն չէր տա¹⁹: Նա պարզ տեսնում էր, որ կրթական գործն սկսել էր հսկա քայլերով առաջանալ. իրար հետևից բացվում էին պետական ու մասնավոր ուսումնարաններ. աշակերտության համար ավելի ու ավելի շատ գրքեր էին դուրս գրվում Ռուսաստանից ու արտասահմանից. վերջապես, հատկապես հայոց լեզվի ուսուցման գործում, լուրջ դժվարություններ էին ծագում՝ կապված դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մեծ պակասի հետ, որովհետև եղածները հին էին՝ Վենետիկի (Մ. Զամչյան, Գ. Ավետիքյան) ու Պոլսի (Մեսրոպ Տեր-Հարությունյան) հրատարակություններ, կամ էլ Սալլանթյանց Միքայիլ վարդապետի հեղինակությունը, որոնք դժվարամարս էին, խիստ թանկ և գավառական դպրոցներում գործածելու համար աննպատակահարմար:

Արդանյանց եղբայրներին Գ. Շաղինյանն ընդառաջում էր հատկապես նրա համար, որ մի փոքր գումար ծախսելով՝ նախ տեր էր դառնում մեծ պահանջ ունեցող մի դասագրքի, այն էլ պաշտոնապես հավանության արժանացած, և սկզբնապես մի քանի տասնյակ օրինակ վաճառելով՝ ետ էր ստանում իր ծախսած փողը, իսկ ապա՝ մնացած հարյուրավոր օրինակները նվիրելով Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը, ձեռք էր բերում մի հեղինակավոր միջնորդ, որ կհասցներ նրան բաղձալուն՝ խաչի կամ մեղալի: Որքան էլ տարօրինակ է, դասագիրքը լույս է տեսնում 1840 թ. կեսերին միայն, մինչդեռ Գ. Շաղինյանի «մեծագործության» մասին բարձր իշխանություններին հաղորդվում է 1839 թ. աշնանը. հոկտեմբերի 28-ին Անդրկովկասյան դպրոցների վերատեսչի պաշտոնակատար Վասիլկովսկին երկրամասի կառավարիչ Գուրովինի ուշադրությունը հրավիրելով Գ. Շաղինյանի բարեգործության վրա (նա իր ծախսով տպագրել էր Արդանյանցների քերականությունը և 300 օրինակ նվիրել վերատեսչությանը)՝ միջնորդում է, որ Գ. Շաղինյանը պարգևատրվի

¹⁷ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 424, գ. 77, թ. 4—5:

¹⁸ Նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 372, թ. 1ա:

¹⁹ Գարրիկ Շաղինյանի «գործունեությունը» երևում է նաև հետագայում: Պարզվում է, որ նա մտադրություն է ունեցել Տփղիսում գրախանութ բաց անել (տե՛ս «Կովկաս», 1846, մայիսի 4, № 17), իսկ 1847 թ. էլ սուրբ Նունի անվան կանանց բարեգործական ընկերության է նվիրում մեկ օրինակ հայերեն «Կովկաս» լրագիր (տե՛ս «Кавказ», 1847, № 4, с. 4), անտարակույս, ինչ-ինչ թաքուն ակնկալիքից դրդված:

ոսկե մեդալով: Գոլովինի պատասխանն ուշանում է: Որպեսզի գործն արագանա, 1840 թ. հունիսին Գ. Շադինյանը 300 օրինակ էլ է նվիրում վերատեսչությանը²⁰: Բայց մեդալի մասին նորից ո՛չ մի խոսք: Ինչպես երևում է, այս հապաղումը զվարճալի խոսակցությունների նյութ է դառնում Թիֆլիսում՝ հարկադրելով Խ. Աբովյանին ևս իր վերաբերմունքն արտահայտել «Աչքի լույս ջան...» երգիծական բանաստեղծությամբ²¹:

Գ. Շադինյանն ինչքան էլ վատ մարդ լիներ, Խ. Աբովյանը հազիվ թե նրա խորտակված պատրանքները ծաղրի առարկա դարձներ, եթե ուրիշ, ավելի լուրջ դրդապատճառներ չլինեին: Հայտնի է, որ Անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Ե. Օ. Հասսենմյուլլերի խաղամուկության, ապա և պետական գումարները վատնելու և բանտարկվելու անուղղակի հետևանքներից մեկը «Նախաշավղի» տպագրության խափանումն եղավ: Խ. Աբովյանի 1839 թ. և հաջորդ տարիների փորձերը (ընդհուպ մինչև 1844 թ.)՝ «Նախաշավղին», իբրև ուսումնական ձեռնարկ, Անդրկովկասի գավառական դպրոցներում օգտագործելու համար հոգևոր իշխանություններից պաշտոնական թույլտվություն ձեռք բերելու, միաժամանակ և պետական միջոցներով այն տպագրելու, ապարդյուն անցան: Եվ այդ առումով նրան քիչ չխանգարեցին Արզանյանց եղբայրները, իբրև դպրոցների վերատեսչության իշխանավորների ականջին փսփացող: Իսկ հիմա, Գ. Շադինյանի օգնությամբ տպագրելով իրենց դասագիրքը, նոր, անհաղթահարելի պատենշ էին կանգնեցնում «Նախաշավղի» առջև, առերես երեմն գովաբանելով այն:

Խ. Աբովյանն առաջադրում էր աշխարհաբարը գրականության և դպրոցի լեզու դարձնելու խնդիրը, կազմել էր մի երկրորդ քերականության դասագիրք ևս՝ հայոց հին ու նոր լեզուները համեմատական եղանակով ուսուցանելու նըպատակով, ժողովրդական ընթերցանության համար զանազան գրքեր: «Նախաշավղի» լույս աշխարհ գալը աստիճանաբար ճանապարհ կբանար դրանց առաջ ևս՝ իր ու իր գաղափարակիցների այս ու մյուս հրատարակություններով սկիզբ դնելով նոր դպրոցի, մատենագրության ու հայագիտության բարգավաճմանն ու հաղթանակին²²:

20 ՎՍՄԸ ՊԿՊԱ, ֆ. 2, գ. 372, Թ. 1ա և 9,

21 «Աչքի լույս ջան...» երգիծաբանության նախորդ հրատարակիչների կարծիքով՝ այդտեղ ծաղրված է տիդիսեցի վաճառական Գաբրիել Թալիրովը (տե՛ս Լ. Զ., Խաչատուր Աբովյանի նորահայտ բանաստեղծություններից, «Գրական թերթ», 1940, № 5, Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. II, էջ 393), որն իբր «հայտնի հարուստ էր և իրեն համարել է դրականության հովանավոր» (տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, էջ 392, Լ. Նանումյանի ծանոթագրությունը), բայց այդպիսի անձնավորության մեր ձեռագրական և դիվանական թափառումների ընթացքում չենք հանդիպել տակավին, ուր թե նա լիներ «դրականության հովանավոր»:

22 Դեռ տպագրությունը չավարտված և պաշտոնապես լույս չտեսած, «Նախաշավղի»-ը, իբրև ուսումնական ձեռնարկ, մասնավորապես հայերեն տառերի հնչման իր նոր եղանակով (հնչական ոճ կամ մեթոդ) ազդում էր իրենից հետո հրապարակ հանված քերականական աշխատությունների վրա: Դրա ապացույցներից մեկն էր նաև Արզանյանցների հրատարակած ներկա «Քերականություն հայ համագոտ»-ը (Տիֆլիս, 1840): Այս գրքի 237-րդ էջում Արզանյանցները գրում են. «Տառք ի մերս լեզու յերեսունևկեսգ գիրս բովանդակին, որոց ձևք այսպէս կերպավորին. ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ...» և այլն, «յորս յաւելեալ զտառդ օ և ֆ՝ լինին երեսունևութն»: Այս տողերի աղբյուրը Մ. Չամչանի քերականությունն է, ուր կարդում ենք. «Տառք ի մերս լեզու յերեսունևկեսգ գիրս բովանդակին, որոց ձևք և հնչմունք այսպէս կերպաւորին՝ ա—այբ»,

Վերատեսչությունն էլ իր նկատառումներն ունենր. Դ. Շադինյանի «բարեգործության» շնորհիվ ստանում էր ձրի դասագիրք, որը թերևս մեկ-երկու հարյուր ուրբլի եկամուտ էլ բերեր, մինչդեռ Խ. Աբովյանին ընդառաջելիս՝ պետք է ո՛չ միայն ղրկվեր օգուտից, այլև նոր ծախքեր աներ, միաժամանակ ղրգոելով պահպանողականությանն ու հայ եկեղեցականությանը:

Ահա՛ թե ինչպիսին էր հայ տնտեսության գիտնականների և վաճառականության ու ինքնակալության պաշտոնյաների դաշնակցության պտուղը: Ահա թե ինչո՞ւ Խ. Աբովյանը չէր կարող լռել և իր բացասական վերաբերմունքը շարտահայտել Շադինյան—Արղանյանց գործակցության մասին:

«Աշքի լույս ջան, դարդ մի՛ անիլ...» բանաստեղծության միայն մի ինքնագիր է պահպանվել²³, այն էլ հետագայում սրբագրված «էջն ու Բյուրուլը» առակի նախնական տարբերակին կից²⁴ և նույն այն մեծագիր տետրակում, ուր ամփոփված են նաև «Ղարիբն» բանաստեղծությունը, «Հունայնություն աշխարհի, այգին Ղորղանովի» արձակ երկը և «Ո՞ւմ ասեմ սրտիս դարդերն ես. ա՛խ, ո՞ւմ...» քնարական հատվածը, բոլորն էլ աշխարհաբար, բոլորն էլ անթվակիր, բոլորն էլ սեագիր և 1839 թ. վերջերից 1840 թ. վերջերն ընկած ժամանակամիջոցում հորինված գրվածքներ, իսկ մասնավորապես «Աշքի լույս ջանը...»՝ 1840 թ. երկրորդ կեսին:

Առանձին բանաստեղծական տողերի շտկումները կամ հապավումները սույն ոտանավորի մեջ շատ չեն, և բովանդակությամբ ու ոճով այն էական փոփոխության չի ենթարկվել: Առաջին, տասնվեցերորդ և նախավերջին տողերը, ինչպես ցույց են տալիս բնագրային տարբերությունները, սկզբնապես հնչել են՝

Գարբիել ջան, դարդ մի՛ անիլ...

Գարբիել ջան, շատ մի՛ ուռչիլ...

Գարբիել ջան, լավ չե՛ս անում...

Հետագայում, սակայն, հավանաբար զգալով, որ ամբողջ բանաստեղծությունն այնքան թափանցիկ է գրված, որ ընթերցողների համար դժվար չի լինի կռահել,

բ—բեն. գ—գեմ կամ գիմ, դ—դա, ե—եչ, զ—զա. է—է, ը—ը կամ ըթ, ք—քո կամ քո... և այլն, այդու լաւելալ զտառագ օ և ֆ՝ լինին երեսունեութն, զորոց զյատկութիւնսն տե՛ս ի բառարանիս (Մ. Չամչեան, Փերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 147, նույնը՝ Տիգրիս, 1526, էջ 147): Արղանյանցները արտագրելով Մ. Չամչանին՝ դուրս են թողել տառերի հնչման վերաբերյալ հրահանգը կամ տառերի անվանումը՝ այբ, բեն, գիմ, դա և այլն, դրանով իսկ լռելայն համաձայնելով Խ. Աբովյանի «նախաշավդի» առաջարկած սկզբունքին. «Խնդրեմ ի փառս աստուծոյ ի բաց թողուլ ղյիմար անուանակոչութիւն տառից՝ այբ, բեն, գիմ, քք և այլն. զամենայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել...» (Խ. Աբովյան, Երկերի լրակատար ժողովածու, հ. V, Երևան, 1950, էջ 11—12):

«Նախաշավիղը» 1838—39 թթ. տպագրվում էր հենց Արղանյանցների տպարանում, ու այդ առիթով վերջիններս ծանոթ էին գրքի բնագրին, իսկ մասնավորապես Դավիթ Արղանյանցը նրա անպաշտոն զրախոսն էր, երբ «Նախաշավիղի»՝ Անդրկովկասյան դպրոցներում գործածելու հարցը քննվում էր Բիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդում: Այս ուղագրավ խնդրին սակայն կանդաղառնանք այլ առիթով:

²³ Տե՛ս Ա, № 60, էջ 29—30:

²⁴ Այս առակի հղացումն ևս կապված է «Նախաշավիղի» ձախող տպագրության պատմության հետ:

թե ժաղրված հերոսն իրականում ո՞վ է, «Գաբրիել ջանը» փոխարինել է «Աչքի լույս ջան» արտաքինապես մտերմիկ արտահայտությամբ, որն իրականում ավելի ընդգծուն է դարձրել իս. Աբովյանի հեգնանքը: Ջնջված են նաև նախապես գրված երկու ամբողջական բանաստեղծ 4-րդ [Հազար գիրք ա տանդ տպվում] (ակնարկ, որ Արզանյանցների տպարանը տեղավորված է Գ. Շադինյանի տանը), և 7-րդ [Սիրուն աղջկերք շատ ճիտ արել] (ակնարկ, որ նա վարքուբարքով թեթև է): Վերջապես՝ բանաստեղծության երկրորդ տունը, չգիտես ինչու, մնացել է թերի, երեք տողանոց:

Խ. Աբովյանը, անտարակույս, վերոհիշյալ ուղղումներով ջանացել է հնարավորին չափ սանրել Գ. Շադինյանի անձին ու անձնականին վերաբերող մանրութները, առանց, սակայն, հեռանալու նախատիպի արտաքին և բնավորության հատկանշական գծերից: Այդ են վկայում առկա դիպուկ, ճշգրիտ, ինչու՞ չէ, նաև թափանցիկ բանաստեղծերն ու ամբողջական քառյակները.

Տպած գրքերդ, դասթա-դասթա,
Ցեց, մկներին դառել են փայ.
Մկներն են քո անունդ օրհնում,
Ում փող տվիր՝ վրեժ ծիծաղում...
Ասենք՝ գրքի հոտ ես առնի,
Փխլիսոփա, վարպետ դառել,
Չէ՛, էլի մեր քաղքի ճուտն ես,
Մենք լավ գիտենք՝ ի՞նչ պտուղ ես...
Տո՛ւ էն թողի կեղտն ու հոտը
Դեռ կպած են շլնքի՞ց մոտը.
Մեղ ընչի՞ ես բեգնամ անում
Ու քեզ ու քեզ թանկ-թանկ ծախում:
Մեկ բոյ ունիս՝ գազ ու կես ա,
Գլուխդ հետը լիտր ու կե. ա...
Քու ի՞նչ բանն ա խելքիդ զոռ տաս,
Աչքերդ շուես, ուռած ման գաս...

Կառուցվածքային առումով էլ ինքնատիպ է սույն քերթվածը: Առաջին տողից մինչև վերջինը, արտաքինապես մտերմիկ ու հանդարտ խոսքերով՝ թրվում է, թե հեղինակը ձգտում է բարոյական ընթացքի և խելամիտ գործերի կոչել իր «սրտամոտ ընկերոջը», իր «աչքի լույսին», բայց ամեն անգամ էլ տեղն ու տեղը հիշատակում է նրա այնպիսի արարքներ, որոնք բնորոշ են մի-միայն արգահատելի հոգիներին:

Ճիշտ է, Գ. Շադինյանը ըմբռնված է կյանքի բարիքները, ոտքի տակ տվել ողջ նվրոպան, բայց էությունով մնացել է հինը՝ նենգ ու խաբեբա:

Խանի խարաբ, ի՞նչ ես ուռչում.
Լեյպցիդ, Լոնդոն ման ես էկել,
Ալվան բաներ շատը տեսել:
Կուպեցուծյուն չէիր ուզում,
Խաչ ու շնի հետը ընկնում.
Էս օր, էքուց փոշտը կգա,

Մուրադդ կանեսս, տո՛ւ, քեֆ արա՛...
Կարդացողից դու հեռու կա՛ց,
Քոնն ա գազը, դուքանդ բա՛ց.
Կոպեկները դու կուլ տալով՝
Սարդ ես դառել տանով, տեղով...:

Խ. Արուստյանի կյանքը եղել է շարունակական պայքար ընդդեմ հնի, ավատականի ու հետադիմականի, հանուն նորի ու առաջադիմականի, և այդ կենաց ու մահվան կովի գրական արձագանքները լսվում են նրա շատ ստեղծագործություններին:

«Ալբի լույս ջան, դարդ մի՛ անիլ...» երգիծանքը այդ պայքարի դրվագներից մեկի գրական վավերագիրն է, ուր անողոք ձևով մերկացվում է վաճառականության և հին մտավորականության դաշնակցությունն ընդդեմ նոր հայախոսության ու դպրոցի, որոնց սկզբնավորումն ու ազատ զարգացումը Խ. Արուստյանի վեհ նպատակներից էին, էլ չենք ասում՝ նրա կյանքի բարձրագույն իմաստը, առանց որի նա չէր պատկերացնում հայ ժողովրդի ազգային համախմբումը և տնտեսական, քաղաքական ու հոգևոր վերածնունդը:

Որքան էլ սկզբունքային ու անզիջում, Խ. Արուստյանի ծիծաղը չար չէ, որովհետև նա կարեկցող սրտի տեր էր, անձնական նկատառումներից վեր կանգնած մարդ: Միայն մի դրվագ. երբ ժամանակ անց, 1841 թ. փետրվարին վախճանվում է նրա դասընկերոջ (Ներսիսյան դպրոցից)՝ Նիկողայոս Տեր-Շմավոնյանի կինը, Խ. Արուստյանն այդ առթիվ մի ակնարկ է դրում և զգայացունց ոճով նկարագրելով հուղարկավորության հանդեսն ու սգավոր հարազատներին, անկեղծորեն ցավակցում է նաև Գ. Շադինյանին, որի մորաքրոջ աղջիկն էր հանգուցյալը: «...քանի Գ. Շադինովի էն վերջին ախն ու վախը միտս ա ընկնում, որ գերեզմանի գլխին կանգնած՝ ընչանք կարգը կկատարեն, հենց գիտես, թե ազնիվ երիտասարդի սիրտն ուզում էր, որ տրաքի, էնքան բերնին ու աչքին հուփ էր տվել... քանի նրա էն վերջին գլխին տալը, էն աննման աչքն ու ունքը էնպես արտասովակուղ տեսնիլը որ միտքս չի ընկնում... էս սհաթին աչքս սեվանում ա, սիրտս արին ա կաթում, օրս ու ումբոս հող դառնում»²⁵:

Վերը բերված տողերից, թերևս, ուրիշները հետևեցնեն, թե Խ. Արուստյանի երգիծանքն առօրեական, մտերմիկ կատակ էր լուկ և զուրկ հասարակական բովանդակությունից: Բայց ներկա դեպքում դա կլինեի սոփեստաբանություն: Կյանքում, նեղն ընկած ժամանակ, այո՛, Խ. Արուստյանը նաև սրամտում էր ու նաև՝ երբ տեսնում էր, որ յոթ օտարն անգամ կարիք ունի սրտամոտ խոսքի, կարեկցանքի, չէր զլանում իր մխիթարանքի խոսքն ասել, սկզբունքային հարցերում, սակայն, երբեք չզիջելով և դրանով իսկ ցուցադրելով իր բարձր բարոյականությունն ու մարդասիրությունը:

Անկախ նրանից, թե ով էր նրա երգիծանքի առարկան՝ նախածանոթ մե՛կը, թե՛ հակառակորդը, եթե բախման շարժառիթը նվիրական գաղափարների ոլորտին էր վերաբերում, իսկ այդ անձն իր գործով ու ընթացքով խանգարում էր իրեն, Խ. Արուստյանի խոսքը դառնում էր հատուկ, ձաղկող ու դատապարտող: Գ. Շադինյանի «ազգային բարեբարությունը» վերջին տեսակից էր և փաստորեն

²⁵ Խ. Արուստյան, Թեֆլիսի հայոց հանգստարանը (եմբերի լիակատար ժողովածու), հ. IV, Երևան, 1947, էջ 45):

խոչընդոտում էր ազգային հառաչադիմութիւնն ու լուսավորութիւնը, ուստի և
ենթակա էր արդարացի ու խիստ քննադատութեան:

Այս է «Աչքի լույս ջան...» երգիծանքի բարոյական կողմը:

ИСТОРИЯ СТИХОТВОРЕНИЯ Х. АБОВЯНА «СВЕТ МОИХ ОЧЕЙ, НЕ ГОРЮЮ...»

ПИОН АКОПЯН

Резюме

Сатирическое стихотворение «Свет моих очей, не горюю...» (1840 г.) — отклик той бескомпромиссной борьбы, которую вел Х. Абовян за общепонятный литературный язык, за новую литературу и школу. В нем высмеивается тифлисский купец Гавриил Авелович Шадинов, который, издав компилятивную грамматику древнеармянского языка братьев Арзановых, преподнес ее в дар дирекции закавказских училищ для раздачи бедным ученикам, лелея при этом надежду на получение высочайшей награды — медали или креста.

Такое «благодаяние» и содружество консервативных ученых и толстосумов на самом деле было направлено против просветительских и педагогических начинаний Х. Абовяна и препятствовало введению в закавказских школах его учебника «Предтропье», составленного на общепонятном языке и по методу новейших педагогов.

Хотя и весь тон стихотворения дружески-насмешливый, но оно в корне пронизано острым критическим духом.